

7	Հազարահան պատ	75	359	326	Հունի	Միդահ- սեան
8	Հարելիի- սա	161	609	572	»	Միդահ- սեան
9	Հեղաճ	72	219	196	»	Շարժա- կան*)
10	Իոր— Արթիկ	101	4:5	417	»	Միդահ- սեան*)
11	Զրիլի	125	380	306	»	Միդահ- սեան*)
12	Ոռաման- վերդի	150	681	616	»	Միդահ- սեան
13	Տաւշան- Դըլադ	157	520	502	»	Միդահ- սեան
		1431	5310	4875		

## Գ Ո Ւ Մ Ա Բ

Գիւղերի թիւը—125  
Տների թիւը—15944  
Հունչ արական—65610  
» իգական—59288

Միջնակ-դպրոց—2  
Երկասեան—18  
Միդասեան—72 (36—36)  
Շարժական—30

## Յ Ո Բ Ե Լ Ե Ա Ն Ե Բ.

Ձեռնութեան ամառական 25 Ա. Մ. Ե. Ա. Բ.:

1883—1908.

Աւթսունական թուականը մեր դպրոցների ամենաշաղկեալ ժամանակն էր, երբ բոլոր քիչ թէ շատ խոշոր գիւղերում գրեթէ զպրոցներ ունենք, երբ հայ ընտանիքներում սկսել էին հայերէնով հետաքրքրուել և հայերէն գրուածներ կարդալ, պակասում էին մանուկների հոգուն ու սրտին մատչելի մանկական հրատարակութիւններ և աշա 1883 թւին մի խումբ երիտասարդներ թիֆ-

լիսում մի շաբք խորհրդածութիւններից յետոյ որոշում են մանկական ամսագիր հրատարակել դասերից դուրս, ընտանիքում երեխաններին հետաքրքիր ընթերցանութեան նիւթ մատակարարել:

Ոկտումբ են «Աղբիւրի» հրատարակութիւնը մեծ ոգեւորութեամբ: Սակայն այս ոգեւորութիւնը երկար չի տեւում: Հետզհետէ խմբագրութեան անդամները սառչում դադարում են աշխատակցելուց և խմբագիր Տ. Նազարեանին մինակ են թողնում:

Ոգեւորութեան սառչելուն նպաստում են երկու հանգամանք. նախ՝ որ մեզանում դադափարի տեականութիւն չկայ. ամեն մի դորձի սկզբում տաք կաչել և յետոյ սառչել այդ մեր յատկութիւնն է. այս կողմից թերեւս մենք հայերս նմանը չունենք. որ հասարակական ասպարէզն էլ աչքի առաջ ունենանք, նոյն ցաւալի եղբակացութեան կդանք: Երկրորդ՝ հայերս մի զարմանալի առաւելութիւն ունենք—հայերէն զրուածների զրամ չտալ, այլ ձրի կարդալ. և «Աղբիւրն» էլ կարդացում էր շատ, բայց բաժանորդագին վճարողները քիչ էին: Չնայելով այս երկու աննպաստ պայմաններին—աշխատակիցների հեռանալուն և վատ վարձատրութեան—պ. Տ. Նազարեանը մոլեռանդի յամառութեամբ շարունակում է իր սկսած գովելի դորձը, յուսալով, որ մի օր կգնահատուի իր աշխատութիւնը:

Այդ աշխատանքը ոչ միայն չգնահատուեցաւ, այլ կարծես չար տրամադրութեամբ ոմանք կամեցան խափանառիթ լինել մինչ այն աստիճան, որ նազարեանցը ստիպուած եղաւ «Աղբիւրը» մի առ ժամանակ յանձնել ուրիշ խումբ անձանց և ինքը զնաց արտասահման. սակայն մի տարուց յետոյ վերագառնալով արտասահմանից դարձեալ ձեռք առաւ նրա հրատարակութիւնը և շարունակեց մինչեւ օրս ժամանակ առ ժամանակ դադարեցնելով նրա լոյս տեսնելը: Սպասելի էր, որ մեր դպրոցների վերաբացումից յետոյ «Աղբիւրի» հրատարակութիւնը կանոնաւոր կլինի և զիտակից հայ հասարակութիւնը օգնու-

թեան կդայ, բայց ու բայց այդ հասարակութիւնը միայն անտարբեր հանդիսատես էր «Աղբիւրի» խմբագրի ահազին ծախքերի տակ հեծելուն և նրա մասնակցութիւնը պլատօնական ցաւակցութիւնից դէնը չէր անցնում:

Այսօր տօնում են «Աղբիւրի» հրատարակութեան 25 ամեակը: Մենք կարծում ենք այս տօնը ուշագրաւ է այն տեսակէտից, որ հանդիսատես ենք մի մարդու անխոնջ, յամառ աշխատանքին, որը չնայելով նիւթական և բարոյական ամեն տեսակ զրկանքներին, 25 երկար ու ձիգ տարիներ առանց յուսահատուելաւ, իր ուսերի վրա է տարել սկսած գեղեցիկ գործը, մի յատկութիւն, որ ինչպէս նկատեցինք, բացառիկ երեսոյթ է մեղանում:

Ողջունելով յօբելեարին, մեր կողմից կցանկանայինք գոնէ այս հանդիսաւոր օրում միայն ներբողներ չարտասանուեին նրա հասցէին, որոնցով խիստ առատաձեռն ենք, այլ կազմուեր մի ֆոնդ, որպէսզի միակ հին մանկական ամսագիրը շարունակէր կանոնաւոր ու ճոխ հրատարակուել, բարոյական կրթական ճաշակ զարթեցնէր աճող սերնդի մատաղ սրտերում, որը պ. Տ. Նազարեանի համար կլինէր ամենամեծ վարձատրութիւնը:

Գեկտեմբեր 23-ին Բագրում տօնուելու է Ա. Վրոյրի բեմական գործունէութեան 25 ամեակը: Նա պատանեկական հասակից նուիրուելով բեմին, աչքի է ընկել միշտ կատակերգական պիեսներում իր շնորհալի խաղով: Նա իր բեմական գործունէութիւնն սկսել է Աղամեանի խմբի մէջ և նրա ղեկավարութեամբ:

Մօտ ժամանակներս կատարուելու է նաև Տիկին Ակրանոյշի բեմական գործունէութեան երեսուն և հինգ ամեակը: Տիկինն նոյնպէս առաջին անգամ Ռուսաստանում բեմ է գուրս եկել Աղամեանի հետ և հէնց առաջին օրից զրաւել հասարակութեան սէրն ու համակրանքը: Նա միշտ բեմ է դուրս եկել դրամատիքական պատասխանատու

գերերում և իր խելացի ու մտածուած խաղով ազգել հանդիսատեսների վրա։ Վերջին տարիներս Տիկինը իր բեպերտուարի մէջ մտցրել է նաև Համբէտը։ Այս դերում նա ունի Հաւանողների և չհաւանողների մեծ բանակ։ Հաւատում ենք, որ վաստակաւոր գործիչներին Հասարակութիւնը կիմանայ վարձատրել։

### ԱՆՏԵՂԻ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Ե 17 հոկտեմբերի 1908 ամի. ըստ Հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԽՆԲՆԱԼԱՀԻՆ աճենայն Ռուսոց ի Առաւարչուական Հայոց Սինօդի Սրբոյ Էջմիածնի լուան զգեկուցումն. յ19-րդ համարի փ 25 յունուարի արւոյս «Վատակը լրագրի տպեալէր յօդուած մի» ի Գեառնի Բասարայ վ. Դասպարեան ստորագրութեամբ, որ ինչ զկնի. «Եորերս մեռաւ Սոլքաշում վերաբնակուած Մախսուդ Խասհակեանի կինը. Հրաւիրեցին Ցէր Արտաշէսին ննջեցեալին թաղելու համար» Վերջինս 5 ռ. աշխատավարձ պատ հանջեց, այն ինչ սովորական վարձը միայն 1 ռուբլի է։ Որովհետեւ յիշեալ Մախսուդը վերջին ծայր ազբատութեան մէջ է, ուստի չէր կարող վճարել այդ գումարը։ Մի քանի երիտասարդներ հաւաքեցին 3 ռ. և առաջարկեցին տէր հօրը, բայց Արտաշէս քահանայն հաստատ էր իր որոշման վերայ՝ ննջեցեալին 5 ռ. թաղել։ Այդ բոլորից յետոյ ննջեցեալին առանց քահանայի, առանց եկեղեցական ծիսակատարութեան տարան և թաղեցին, Ասենը՝ գա մի մեծ ցաւ էլ չի, բայց դէպքը շատ բնորոշ է մեր ֆարաջաւորների անհատնում ընչաքաղցութեան տեսակէտից։ Դատաստանական մասն Սինօդիս յ30 յունուարի տարւոյս, թ. 246., զվերսպրելոցն տալով գիտել Կօնսիստորիային Երևանայ, առաջադրէ տրօրինել օրինական կարգաւ ստուգել զիոկաւթիւն յօդուածոյն զարարմանց Արտաշէս քահանային և զարդիւնս քննութեան եզրակացութեամբ հանդերձ առաջի առնել Սինօդիս ի կատարումն այսորիկ